Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11002/23-ԱՆ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «Տարեցների և (Կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 2. Երևան - Նոր Նորք և Ավան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023-31.12.2023թթ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2023 - 31.12.2023թթ. |
| **Ներկայացման օր** | 18.12.2023թ. |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2023.12.19
20:00:45 AMT

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում սոցիալական աշխատողների կողմից իրականացված տունայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Ավան և Նոր Նորք համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է շահառուների կարիքների վերագնահատում, որոնց հիման վրա իրականացվել է 11 դեպքի վարում (ընտանեկան նպաստ համակարգում վերափաստագրման կազմակերպում, վերականգնողական անհատական ծրագրի ձեռքբերում, վերականգնողական օժանդակ միջոցների ձեռքբերման կազմակերպում, անձնագրի և նույնականացման քարտի ձեռքբերման կազմակերպում): Իրականացվել է 3 ուղեկցում, թվով 52 շահառուի համար 67 միջամտություն/միջնորդում այլ կառույցներ, անապահովության միավորի տեղեկանքների ձեռքբերում՝ թվով 25 շահառուի համար:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
  Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 2 շահառուի հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որն ուղղված է եղել շահառուի հուզական վիճակի կայունացմանն ու հիշողության ամրապնդմանը:
  Մշակութային միջոցառումների կազմակերպման շրջանակներում իրականացվել է թվով 1 միջոցառում՝ էքսկուրսիա դեպի Սաղմոսավանք, որին մասնակցել է 2 շահառու:
- **Կենցաղային սպասարկման աջակցության** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի:

Յուրաքանչյուրին իր անհատական կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների, կոմունալ վարձավճարների իրականացման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխան այլ վայր:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում բուժքույրերի կողմից տնայցեր են իրականացվել թվով 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող 48 շահառուի համար պետպատվերի շրջանակում պոլիկլինիկայից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 13 շահառու ուղեկցվել է բժշկական հաստատություններ, 11 շահառուի համար իրականացվել է միջմկանային սրսկում, 3 շահառուի համար երակային սրսկում, 7 շահառուի համար գլյուկոմետրիա, պոլիկլինիկայից ձեռք է բերվել 14 ուղեգիր՝ ստացիոնար բուժման կազմակերպման նպատակով, 2 շահառուի համար՝ ամբուլատոր քարտից քաղվածք:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են մշակված հետևյալ նյութերը.

- Նոր Նորքի ՑԿ-ում Աշուղ Նազելիի հյուրընկալություն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oequs, http://surl.li/oeqvj)
- Պոետ Աշոտ Միրիջանյանին (ՄԻՐԱՇ) հյուրընկալություն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oeqxg),
- Քննադատական մտածողություն (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/oeqyd):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրային գործողություններն իրականացվել են առանց խոչընդոտների:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկման աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Նոր Նորք ՑԿ-ի սոցիալական աշխատանքի սուպերվիզորը մասնակցել է Տարեցների պաշտպանության ցանցի հանդիպմանը, որի նպատակն էր ողջունել ցանցի նոր անդամ կազմակերպություններին, ներկայացնել ու քննարկել՝ «Տարեցների տնային խնամք» թեման՝ ԿԳՍՄ-ին կից գործող բժշկական ուսումնական հաստատություններում ներառելու համար:
- Սոցիալական աշխատողների տոնի կապակցությամբ «Նռնենի» և Նոր Նորք ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են ԵՊՀ դոցենտ Արտակ Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովին, որի խորագիրն էր «Արցախ 2020-2023թթ. սոցիալական հիմնախնդիրները եւ սոցիալական աշխատողի քաղած դասերը»:
- Կազմակերպության հոգեբան Հրաչյա Ամիրյանի կողմից իրականացվել է հոգեբանական դասընթաց Նոր Նորքի աշխատակազմի համար «Հուզական այրումը եւ դրա կանխարգելումը» թեմայով:
- Աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար Նոր Նորք և Ավան համայնքների տնային խնամքի ծառայություն տրամադրող բոլոր աշխատակիցները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպված «Էթիկական կոդեքս» և «Անձնական տվյալների պաշտպանություն» թեմաներով դասընթացներին:
- ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԲՀ-ի, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության նպատակով գործընկերության հիմնադրամի (UNPRPD) և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի հետ համատեղ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ իրականացվել է «Ֆունկցիաների միջազգային դասակարգում ՖՄԴ կիրառման ճանապարհային քարտեզը» անունով դասընթաց, որին մասնակցել են Նոր Նորք ՑԿ-ի բուժքույրը եւ սոցիալական աշխատողը:

Հավելված 7
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11002/23-ԱՆ պայմանագրի
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 76/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 5 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 41-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 70 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –<br>Բ - 75 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 3 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 1 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) Հոգեբանի խորհրդատվություն | 2 |

Կազմակերպության նախագահ՝ Ե. Մխիթարյան ________________________

«18» 12 2023 թ.